

**Նոր գիրք  
ՃԱՐՏԱՐՆ ՈՒ ՃԱՐՏԱՐՈՑԻՆԵՐԸ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀՈՒՆԿՈՒՅԹՈՒՄ**

Վերջերս մեծ հետաքրքրությամբ կարդացի մեր համերկրացի, անվանի գիտնական Սերգեյ Մելքունյանի «Հուշագրություն. մտորումներ, խոհեր» գիրքը, որը խորհելու և մտածելու առիթ տվեց բառի ամենալայն իմաստով: Առաջին հերթին ինձ հուզեց ազգագրության հիմնախնդիրը և նրա զարգացման ու հարստացման ընթացքը մեզանում, կոնկրետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում՝ մեր հերոսական նախնիների սրբազան օրրանում, որի տերերն այսօր մենք ենք, իսկ վաղը լինելու են մեր սերունդները...

Լավ հիշում եմ... Տարիներ առաջ հանդես էի ելել պատմաբան, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Խ. Ղազարյանի «Տումի» ազգագրական աշխատության վերաբերյալ, շնորհավորել, միաժամանակ ընդգծել, որ Արցախի մտավորականները պարտավոր են զարգացնել ու հարստացնել ժողովրդի պատմության համար չափազանց կարևոր այդ բնագավառը:

Այդպես էլ եղավ. լույս ընծայվեցին վաստակավոր մանկավարժ Ն. Ավետիսյանի «Հաղորտի», պատմական գիտությունների դոկտոր Հ. Աբրահամյանի «Քերթ», Փ. Հակոբյանի «Դրմբուն», Ե. Աբրահամյանի «Մեծ Թաղեր», Մ. Բեգլարյանի «Իմ Քարահունջը», Ժ. Գրիգորյանի «Ուլուբաբ», Ս. Մինասյանի «Չափար», Երվանդ և Նինա Աբրահամյանների «Արցախյան դեղաբույսեր» և այլ հեղինակների ազգագրական աշխատությունները: Ասել է թե՛ սկսեցինք ունենալ նկատելի ազգագրություն:

Այստեղ ավելորդ է մեծ համարում համառոտակի անդրադառնալ ազգագրության էությանն ու նշանակությանն ազգերի պատմական ընթացքին ծանոթանալու և ուսումնասիրելու համար: «Ազգագրությունը ժողովուրդների կենցաղը, սովորույթները, ծագումը, տարաբնակեցումը, էթնիկական յուրահատկությունները, պատմամշակութային առնչությունները հետազոտող գիտություն է» (Հայկական սովետական հանրագիտարան, ՀՍՍՀ, ԳԱ, Եր., հ. 1, էջ 103): Պետք է նշել, որ այս իմաստով առավել ակնառու է Հին Հունաստանի գրականությունը: Հերոդոտոսը, Քսենոփոնը, Ստրաբոնը, Պլուտարքոսը, Պլինիոս Ավագը, Տակիտոսը և ուրիշ մեծեր ազգագրական տեղեկություններ են հաղորդել ոչ միայն հույների, այլև հարևան, այդ թվում և հայ ժողովրդի ձևավորման, պատմական ընթացքի, կենցաղավարության և այլնի վերաբերյալ: Ինչ վերաբերում է հայ մշակույթի ներկայացուցիչներին, կարող ենք նշել Ազաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու, Կորյունի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Սեբեոսի, Մովսես Կաղանկատվացու, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Կիրակոս Գանձակեցու, Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի, Ստեփանոս Օրբելյանի, Առաքել Ղափրիժեցու և մեր մյուս պատմիչների երկերը: Հայ ժողովրդի ազգագրության ներկայացման ուղղությամբ ակնառու են միջնադարյան արաբ մատենագիրներ Իբրիսի, Իբն Բատուտայի, Աբուլ Հասանի, Իբն Հաուկալի, եվրոպացի Մարկո Պոլոյի և մյուսների ձամփորդական նոթերը:

Ազգագրության զարգացման կարևորությունն է թելադրել 19-րդ դարի հայ գործիչներ Մ. Թաղիադյանին, Խ. Աբովյանին, Մ. Բժշկյանին, Մ. Էմինին, Ղ. Ալիշանին, Գ. Սրվանձտյանին, Ե. Լալայանին, Մ. Աբեղյանին, Խ. Սամվելյանին և այլ երախտավորների՝ լծվել կարևոր այդ գործին, որի արդյունքը պատմական մեծ արժեք է և անչափ ուրախացրել է Մեծ Լոռեցուն:

Ճիշտ է, խորհրդային տարիներին բավականին հարստացել է հայկական ազգագրությունը, բայց հայտնի պատճառներով շրջանցվել ու գրեթե մոռացվել է Հայոց Արցախը: Եվ եկել է ժամանակը՝ լուրջ վերաբերմունք ցուցաբերելու այդ կարևոր բնագավառ:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ռի նկատմամբ, առանձնապես մեր օրերում, երբ Ադրբեջանի և՛ քաղաքական, և՛ մտավոր ուժերն ամենուրեք հնչեցնում են իրենց մոզոնած սուտն ու կեղծիքը՝ ոչ միայն Արցախը սեփականելու, այլև Հայաստանը՝ Երևան մայրաքաղաքով, իրենցը համարելու բարբաջանքով:

Այսօր մեր պապերից մեզ ավանդված, մեր հերոս նահատակների արյան գնով փրկված Արցախ աշխարհի պատմական անցյալի, նրա հազարամյակների հավատալույս ուղին նկարագրող յուրաքանչյուր գիրք, գրքույկ, հողված մի-մի ռումբ են մեր երդվյալ թշնամու մտազարության դեմ:

Այս առումով ժամանակին ու տեղին հրապարակված կարևոր խոսք է Ս. Մելքունյանի վերոնշյալ աշխատությունը: Այն սովորական գիրք չէ, բազմաշերտ, բազմերանգ, բազմաբնույթ մի պատում է Հայոց Արցախի բարախուն սրտի առողջ երակներից մեկը հանդիսացող ճարտար գյուղի մասին:

Գիրքը բացվում է ճանաչված լրագրող, պատմաբան, երջանկափիշատակ Սուրեն Ռաշիդյանի բովանդակալից խոսքով, որն սկսվում է հետևյալ իմաստությամբ. «Հացահատիկի արժեքը որոշվում է նրա բերքատվությամբ, մարդու արժեքը՝ այն օգուտով, որ նա կարող է բերել իր մերձավորներին, ... հասարակությանը» (Ս. Մելքունյան, Հուշագրություն, մտորումներ, խոհեր, Եր., 2015, էջ 3):

Իտալիայի մեծ զավակ Ջուզեպե Գարիբալդու այս իմաստուն գնահատականը Ռաշիդյանը վերագրում է նաև այս գրքի հեղինակին՝ բազմավաստակ գիտնական Սերգեյ Մելքունյանին:

Հիրավի, այդպես է: Անվանի գիտնականի անցած բեղմնավոր ուղին կարող է զարդարել ականավոր յուրաքանչյուր մտավորականի գիտագործնական կենսագրությունը: Այդ են վկայում նրա 270 գիտական աշխատանքները, այդ թվում, շուրջ 30 ծավալուն մենագրությունները, դասագրքերը, ուսումնական ձեռնարկները, դրանց գունարած՝ նաև տաղանդավոր գիտնականի մանկավարժական գործունեությունը:

Ս. Մելքունյանի սույն աշխատությունը բազմաշերտ է: Գրքի ինը բաժիններում հեղինակը վերհիշում է իր անցած ուղին՝ մանկությունից մինչև գիտական առատ հունձքի ներկան: Սակայն գնահատելին այն է, որ նրա մանկության և պատանեկության տարիների տխուր և ուրախ, արցունքոտ և հուսավառ պահերը շաղախված են ճարտարի իր սերնդակիցների միևնույն ապրումներին և ակնկալիքներին: Նշենք, որ նրա աշակերտական այդ տարիներն անցել են Հայրենական մեծ պատերազմի ծանր ժամանակներում, որ պատմության մեջ է մտել որպես ողբերգական ու հերոսական, կորուստների ու համաժողովրդական սխրանքների դարաշրջան: Իր պապի ու տատի, նահատակ հոր ու տառապած աստվածուհի մոր մասին բերված հուշապատումները համաժողովրդական կյանքի հուզիչ պատկերներ են, որոնց միջից հառնում է արցախցու արևակույփ կերպարը:

Երախտագիտության ջերմ զգացումների խոսուն հյուսվածքներ են այն հիշողությունները, որոնք վերաբերում են իր անմոռանալի ուսուցիչներ Իսահակ Գրիգորյանին, Ռուբեն Հայրապետյանին, Սուրեն Աղամյանին, Սանջան Հովհաննիսյանին, Արսեն Ստեփանյանին, Լուսիկ Քամայանին և այլոց ու նաև գիտության և մշակույթի ճարտարի գործիչներին:

Ս. Մելքունյանը կարոտով ու հպարտությամբ է խոսում իր հայրենի գյուղի մասին. ճարտարն Արցախ-Ղարաբաղի հնագույն և խոշորագույն բնակավայրերից է: Իսկ Արցախն ու Արցախի հայությունն այնքան հին են, որքան Հայաստանն ու հայ ժողովուրդը, քանզի Արցախ աշխարհը միշտ եղել է Հայաստանի անբաժանելի մասը: Դեռ ավելին պատմական Հայաստանի նահանգներից մեկը՝ 10-րդ նահանգը հանդիսացող Արցախը,

դարեր շարունակ եղել է կենտրոնական Հայաստանը արևելյան վայրի ցեղերի հաճախակի հարձակումներից պաշտպանող հզոր պատնեշ, անխորտակելի վահան, որին զարնվել, ջարդվել ու հետ են շարտվել օտար նվաճողները: Բազմավաստակ գիտնականը բերում է Արցախի զավակ, խոշոր պատմաբան Լեոյի խոսքը. «Առանց Ղարաբաղի լեռնաստանի անհնարին է երևակայել Հայաստանի սրտի, այն է՝ Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսային և արևելյան տափաստաններից» (Նույն տեղում, էջ 22):

Գրքում հեղինակը, անդրադարձնալով պատմական փաստերին, նշում է, որ Արցախը որպես Մեծ Հայքի անքակտելի մաս, մշտապես ակտիվ մասնակցություն է ունեցել Հայկական աշխարհը թշնամիներից պաշտպանելու գործընթացին: Արցախի այրուծին նշանակալից հաղթանակ է շահել նաև Ավարայրի ճակատամարտում: Արցախի մելիքներն իրենց զինված ջոկատներով խիզախաբար մարտնչել են թուրքերի դեմ՝ Դավիթ Բեկի ազատագրական պատերազմի ժամանակ: Հանրահայտ է նաև, որ Արցախի կամավորական զինված ջոկատները և արցախցի զորավարները՝ Դանիել Բեկ և Պողոս Բեկ Փիրումյանները, խոշոր դեր են խաղացել օսմանյան թուրքերի դեմ մղված Սարդարապատի ճակատագրական մարտում: Բազմավաստակ գիտնականն իր որդիական սիրտն է բացում հարազատ ծննդավայրի առջև ու նշում, որ նրա հողատարածքները գտնվում են դաշտային Ղարաբաղի սահմանային մասերում, ուստի միշտ եղել են առաջին գծում և մարտնչել հայրենի եզերքներում երևացող վայրի ցեղերի դեմ:

Ճարտարի կամավորական զինված ջոկատները 1918-1920թթ. մեծ օգնություն են ցույց տվել հարևան գյուղերի բնակչությանը՝ Մսնա գյուղի մոտ մասնակցելով թուրքազերիներին ջախջախելու հերոսամարտին: Այդ ճակատամարտին մասնակցած ջոկատներից մեկի հրամանատարը եղել է ապագա գիտնականի հայրը՝ 24-ամյա Ավանես Մելքումյանը:

Գրքի հեղինակն ընդգծում է, որ Ճարտարը միշտ ակնառու տեղ է ունեցել Լեռնային Ղարաբաղի տնտեսության, կրթության, կյանքի տարբեր ասպարեզներում: Նշվում է նաև 1988-1994 թթ. Ղարաբաղյան ազատագրական գոյամարտին Ճարտարցիների ակտիվ մասնակցությունը: Եվ դա պատահական չէ, հաստատում է նա: Հերոսության ավանդները շատ մեծ են: 1941-1945թթ. գերմանական ֆաշիզմի դեմ մղված պատերազմին մասնակցել են 1200 Ճարտարցիներ, որոնցից շուրջ 600-ը չի վերադարձել հեռավոր ափերից: Այդ նահատակների հիշատակին հուշակոթող և թանգարան են կառուցված գյուղի դեմ դիմաց՝ անտառապատ լանջին: Թանգարանի տուֆակերտ պատերին փորագրված են զոհվածների սուրբ անունները: Իսկ 1988-1994թթ. թուրքազերիների դեմ մղված պատերազմում մարտիրոսված հարյուրավոր ազատամարտիկների հիշատակը հավերժացնելու համար հուշարձան է կառուցվել գյուղի կենտրոնում, Ճարտարի տուֆակերտ, հրաշագեղ մշակույթի պալատի մոտ, որտեղ կանգնեցված է նաև Ճարտարի երկար տարիների լեգենդար նախագահ Սուրեն Ադամյանի հուշարձանը:

Ս. Մելքումյանը հպարտությամբ է նշում հարազատ գյուղի յուրաքանչյուր պատվաբեր քայլ կյանքի տարբեր ոլորտներում: Ընդգծում է հայրենակիցների ակտիվ մասնակցությունը 1991թ. սեպտեմբերի 2-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման գործին:

Ազգագրական տվյալների խոսուն շտեմարան կարելի է համարել սույն գիրքը: Հեղինակը նշում է, որ Ճարտարցիները աչքի են ընկնում մեծին հարգելու, փոքրին սիրելու, հյուրին պատվելու հատկանիշներով, աշխատելու տոկունությամբ, հայրենիքը թշնամուց պաշտպանելու անձնագոհությամբ: Ճարտարցուն բնորոշ է հումորի բարձր զգացումը: Կատակն ու սրամտությունը նրա անբաժան ուղեկիցներն են: Ահա թե ինչու Ճարտարցիներից շատերն ունեն այսպես կոչված «փոթ» անուն: Այսպես՝ Ավանեսին

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

կոչում են Վանես, Սարգսին՝ Սաքի, Հարությունին՝ Թունի, Բագրատին՝ Բագի, Զոհրապին՝ Զոպի, Գաբրիելին՝ Կյապի, Միքայելին՝ Մուքի և այլն:

Ընթերցողը գրքից պարզ պատկերացում է կազմում պատմամշակութային դարավոր առնչությունների մասին: Այսպես՝ մինչև 19-րդ դարի վերջերը Ճարտարը բաղկացած է եղել երկու մասից՝ Գյունե Ճարտար (արևադեմ Ճարտար) և Ղուզե Ճարտար (հյուսիսահայաց Ճարտար): Երկու Ճարտարներն էլ տեղավորված են մի խոշոր լեռնահովտի բարձրադիր մասերում: Ժամանակի ընթացքում երկու Ճարտարների հողատարածքների հարթավայրային մասերում առաջացան նոր բնակավայրեր՝ Գյունե Կալեր և Ղուզե Կալեր անուններով: Այսպիսով՝ միացյալ Ճարտարը 20-րդ դարի սկզբներից բաղկացած է չորս խոշոր մասերից՝ Գյունե Ճարտար և Գյունե Կալեր, Ղուզե Ճարտար և Ղուզե Կալեր: Հետագայում Ճարտարի վարչական, մշակութային, կրթական կենտրոնները հիմնականում կենտրոնացան Գյունե Կալերում և Ղուզե Կալերում, քանի որ արտադրության կազմակերպման, ռելիեֆային ու տրանսպորտային հնարավորությունների առումներով գյուղի այդ հատվածներն ավելի բարենպաստ են: 2010թ. տվյալներով Ճարտարում կա 1048 տուն՝ 4250 բնակիչներով: Ճարտարն ամբողջ Արցախ աշխարհում դեռ հին ժամանակներից փառավոր, բարեկեցիկ կյանքով ապրող գյուղերից է եղել: Ռինգել է եկեղեցիներ, 19-րդ դարի վերջին կազմակերպվել են դպրոց, գինեգործարան և այլ արտադրական ձեռնարկություններ:

Ս. Մելքունյանը գոհունակությամբ է բերում այն փաստը, որ Ճարտարն իր բնակչության թվով, տնտեսության չափանիշներով, հնարավորություններով, կրթության, մշակութային, գիտական կադրերի առանձնահատկություններով յուրահատուկ տեղ ունի Արցախում, որ ԼՂՀ իշխանությունների որոշմամբ այս հանրահայտ բնակավայրին տրվել է քաղաքի կարգավիճակ: 2014 թվականից այն կոչվում է քաղաք: Հեղինակն ուրախությամբ է ընդգծում, որ իր հայրենի Ճարտարը հայ ժողովրդին տվել է 21 գիտության դոկտոր-պրոֆեսոր, այդ թվում՝ Ռուսաստանի ԳԱ ակադեմիկոս:

Գրքի հեղինակը չի ջրջանցում այն անարդար վերաբերմունքն Արցախի հանդեպ, որ ցուցաբերել են ԽՍՀՄ առաջնորդները 1921թ.: Նա գրում է. «Իմ հայրենի գյուղում՝ Ճարտարում, ինչպես նաև ամբողջ Ղարաբաղում, բնակչության թիվը շատ ավելին կլիներ, քան այժմ կա: Խնդիրը կայանում է նրանում, որ Լեռնային Ղարաբաղը 70 տարի գտնվելով թուրք-ազերիների (1918թ. ստեղծված Ադրբեջան կոչվող նորաթուխ հանրապետություն) տիրապետության տակ, ենթարկվել է ամենաստոր, բազում տեսակի ճնշումների, բռնությունների, որի հետևանքով, հատկապես երիտասարդությունը թողնում-հեռանում էր հազարամյակների պատմություն ունեցող իր հայրենիքի» (Նույն տեղում, էջ 33):

Նկատի ունենալով ազգագրության վիճակը՝ Ս. Մելքունյանը նշում է, որ Ճարտարի բնակչության թիվը կարող էր լինել ոչ թե 4250, այլ առնվազն 6500-7000 մարդ: Նա նաև գրում է, որ մինչև 1980-ական թվականները շատ Ճարտարցիներ տարբեր պատճառներով տեղափոխվել և բնակություն են հաստատել Բաքվում: Սոււմգայիթում, Մինգեչաուրում, Գրոզնիում, Հյուսիսային Կովկասի այլ քաղաքներում, Տաշքենդում, Սամարղանդում, Կոկանդում, Երևանում, Հրազդանում, Չարենցավանում և այլուր: Միայն Բաքվում ձևավորվել էր Ճարտարից սերված 600-ից ավելի, Գրոզնիում՝ 450, Երևանում՝ 500-560 ընտանիք: Իսկ Բաքվում, Սոււմգայիթում, Կիրովաբադում, Մինգեչաուրում գտնվող և այլ քաղաքների զարգացման ուղղությամբ վճռական դեր խաղացած բոլոր Ղարաբաղցիները, այդ թվում և Ճարտարցիները, 1988թ. թուրք-ազերիների կողմից բարբարոսական ամենաստոր մեթոդներով ենթարկվեցին ցեղասպանության: Ազերիներն անամոթաբար յուրացրին Ադրբեջանում արցախցիների ունեցած ավելի քան

10 մլրդ դոլարի արժողությամբ կարողություններն ու խնայողությունները:

Ի հեճուկես հարևան թշնամիների՝ Ս. Մելքունյանը կրկին ու կրկին ընդգծում է ճարտարգիների աշխատասիրությունը և նպատակին հասնելու համառությունը:

Գրքի հեղինակը բերում է նաև հարազատ գյուղի տարածքի տեղանունները, Ալաբալի, Կլագին ծոր, Չաղալ, Դուրդուչագ, Շուրխան, Ծարավաճուր, Դուդեն, Ստեփանանց, Շլոր, Գոփուն, Ծլլոկ, Թուզին, Թքեռն, Ննգի անուններով աղբյուրները: Ազգագրական անմոռանալի մի օրինակ է հետևյալ պատկերը. «Դուրդուչագ աղբյուրի մոտ կա մի սալորենի: Այդ աղբյուրի ջրից օգտվողները, հիմնականում կանայք, որպես երախտագիտություն, իրենց թաշկինակները կամ հագուստի որևէ կտոր կապում են անմիջապես աղբյուրի մոտ գտնվող սալորենու ճյուղերից, որի հետևանքով սալորենին զարդարված տոնածառի տեսք է ընդունում: Շատ այցելուներ ծառի տակ թողնում են նաև ծու, մետաղե դրամներ՝ որպես երախտագիտություն... Դուրդուչագը մեզ՝ ճարտարգիներին համար մնում է որպես սրբավայր» (Նույն տեղում, էջ 35):

Գրքում զգալի տեղ է հատկացված ճարտարի տնտեսական, գիտական, մշակութային և այլ ասպարեզների տաղանդավոր ղեկավարների ու գործիչների կյանքին ու թողած ավանդին: Առանձնապես լուրջ ուշադրություն է դարձված ԽՍՀՄ սոցիալիստական աշխատանքի հերոս Սուրեն Աղամյանի նվաճումներին: Նրա ղեկավարության օրոք սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման են արժանացել դաշտավար-բրիգադավարներ Թևոս Սարգսյանը, Դուկաս Ավանեսյանը, օղակավարներ Մադաթ Առուստամյանը, Դանիել Բաղդասարյանը: Ճարտարի խաղողագործության զարգացման բնագավառում անմոռանալի հետք է թողել գյուղատնտես Զահան Լալայանը: Սուրեն Աղամյանի կենդանության օրոք ճարտար են այցելել Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, գրողներ Սերո Խանգադյանը, Սիլվա Կապուտիկյանը, Մետաքսեն, Լեոնիդ Հուրունցը և ուրիշներ:

Ս. Մելքունյանը ջերմ տողեր է նվիրել ճարտարի զավակ, Հայաստանի քաղաքական ու պետական ականավոր գործիչ Եղիշե Ասատրյանի հայրենասիրական գործունեությանը: Բացի այդ, գրքում նշվում են բոլոր անվանի ճարտարգիների անունները, կոնկրետ գնահատվում նրանց արած-դրածը:

Անվանի գիտնականի հուշերում շնչում ու թևածում է ճարտարն իր սովորույթներով ու ակնկալիքներով: Բերվում են ազգային կերակրատեսակները, աղանձը, թթի չամիչը, թթօղին, գինին և այլն: Հեղինակը չի շրջանցում մարդկային բնավորության ամենաջերմ ապրումը՝ կարոտը ծննդավայրի հանդե: Նա գրում է. «Իմ համոզմամբ, ազգի դեմքը բնորոշողը գյուղն է, որտեղ այսօր էլ պահպանվում են ազգային բոլոր տեսակի սովորույթները, որոնք ազգապահպան հզոր ուժերն են: Եվ որքան էլ երկար տարիներ ապրած լինես քաղաքում, այնուհանդերձ, եթե ծնվել, մանկության ու պատանեկության տարիներն անց ես կացրել գյուղում, անհնար է մոռանալ և շատ հաճախակի չկարոտել քո հարազատ գյուղին, սովորույթներին, շրջապատի բնությանը, աշակերտական ընկերներին: Որքան մարդ ավելի տարիքով է դառնում, այդ կարոտն ավելի է ուժեղանում» (Նույն տեղում, էջ 74):

Գրքի «Ուսանողական տարիներ», «Աշխատանքային գործունեության բարդ ուղի», «Աշխատանք բուհական համակարգում», «Մասնակցություն հասարակական-քաղաքական աշխատանքներին», «Ճանապարհորդություններ, մտորումներ, գիտական համաժողովներին մասնակցություն», «Իմ ընտանիքի մասին» բաժիններում ընթերցողին է ներկայանում մի անհատականություն, որին կարելի է համարել աստվածային նվեր ոչ միայն իր ընտանիքին, գյուղին ու Արցախին, այլև ողջ հայությանը, նրա գիտությանը, բուհական մանկավարժությանը և կենսաթրթիռ ու կենսահաստատ մյուս

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

բնագավառներին: Անհատականություն, որն իր տնտեսագիտության դոկտորներ-պրոֆեսորներ՝ Անահիտ դստեր և ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել որդու հետ մեկտեղ պատիվ են բերում ազգին՝ օրինակ հանդիսանալով նոր սերունդներին:

Գիրքն ավարտվում է «Իմ կենսամատենագրությունը» հատվածով, որը ոչ միայն մատնացույց է անում, այլև խորհրդանշում է ականավոր գիտնականի հարուստ ու զարմանահրաշ ուղին, այլև ժողովրդի արժանապատիվ զավակի ապրելու օրինակելի բանաձևը:

**Սուկրատ ԽԱՆՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,**  
**ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ**